Հայաստան, ք. Երևան 0002, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0002, Armenia
+374 60 460405
Info@ekeng.am
www.ekeng.am

Էլեկտրոնային ստորագրության ակտիվացման ուղեցույց

Բովանդակություն

Բովանդակություն 2
Ներածություն 3
Մուտք Անձնական էջ նույնականացման քարտով 4
Մուտք Անձնական էջ առանց նույնականացման քարտի 8
Անձնական էջ 10
Վճարման տարբերակներ 12
Բանկային վճարում 12
Վճարային տերմինալներ 12
Օնլայն վճարում 14
Խնդիրներ 15

Ներածություն

Սույն ձեռնարկը նկարագրում է ինչպես ակտիվացնել նույնականացման քարտի էլեկտրոնային ստորագրությունը, կատարել Օնլայն վճարում, ինչպես նաև ստուգել էլ.ստորագրության ժամկետները:

Մուտք Անձնական էջ նույնականացման քարտով

Անձնական էջ կարող եք մուտք գործել նույնականացման քարտով և առանց նույնականացման քարտի, *պարզապես մուտքագրելով Ձեր ՀԾՀ*:

Ուշադրություն: Եթե **Նոր օգտվող եք** էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար անհրաժեշտ է ակտիվացնել նույնականացման քարտի PIN կոդը, այնուհետև մուտք գործել **ekeng.am -> Անձնական էջ** (ցանկալի է Google chrome բրաուզերով) և սեղմել **Հաջորդ**:

- Նույնականացման քարտը տեղադրելով սարքի մեջ անհրաժեշտ է սպասել մինչ հավաստագիրը բեռնվի:



- Հավաստագիրը բեռնելուց հետո **Google chrome** բրաուզերով մուտք գործել **ekeng.am -> Անձնական էջ** :



- Այնուհետև անհրաժեշտ է սեղմել **Հաջորդ** կոճակը:

- Ընդունել ստորագրող անձի հավաստագիրը՝ (անուն,ազգանունը անգլերեն տառերով և ՀԾՀ) սեղմելով OK:

- Բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել նույնականացման քարտի **PIN** code-ը:

- Ընտրել Վճարումներ դաշտը:

- Մուտքագրել բջջային հեռախոսահամար:



- Վերոնշյալը կատարելուց հետո, բացվում է հետևյալ պատուհանը:

- Վճարումներ դաշտում անհրաժեշտ է մուտքագրել բջջային հեռախոսահամար և սեղմել **Գրանցվել** կոճակը:



- Վճարման առկայության դեպքում «**Ծառայություններ**» դաշտում հարկավոր է նշել *Ծանոթացել եմ հրապարակային պայմանագրին* , որից հետո սեղմել **Ակտիվացնել** կոճակը:



- Բարեհաջող գրանցվելուց հետո կստանաք հետևյալ հաղորդագրությունը:

Եթե էլ.ստորագրության ակտիվացումից 3-5 ժամ անց նկատվում է խնդիր, ապա խնդրում ենք դիմել նաև ընդունող մարմնին (հավաստագրերի թարմացումը կատարվում է ինչպես ԷԿԵՆԳ համակարգում,այնպես էլ այլ համակարգերում):



- Էլ.ստորագրության ժամկետը տեսնելու համար, անհրաժեշտ է թարմացնել էջը՝ սեղմելով **F5** կամ կրկին մուտք գործել **Անձնական էջ -> Ծառայություններ:**



- Ավարտելուց հետո՝ սեղմել **Դուրս գալ** կոճակը:



Մուտք Անձնական էջ առանց նույնականացման քարտի

- Նույնականացման քարտով մեկ անգամ գրանցված օգտվողները Անձնական էջ կարող են մուտք գործել նաև առանց նույնականացման քարտի՝ *մուտքագրելով պարզապես ՀԾՀ-ն:*



- ՀԾՀ մուտքագրելուց հետո գրանցված հեռախոսահամարին գալիս է sms հաղորդագրություն: Հաղորդագրությունը մուտքագրելուց հետո սեղմել **Continue**:



- Բացվում է Ձեր Անձնական էջը

- Էլ.ստորագրության ծառայության երկարաձգման կամ ակտիվացման համար անհրաժեշտ է կատարել վճարում (3000 դրամ):

Վճարման առկայության դեպքում «**Ծառայություններ**» դաշտում հարկավոր է նշել *Ծանոթացել եմ հրապարակային պայմանագրին և հաջորդիվ սեղմել* ***Ակտիվացնել*** *կոճակը:*

Էլ. ստորագրության ժամկետը կարող եք երկարաձգել սպառման ամսաթվից 15 օր առաջ:



Վերոնշյալ գործողությունը կատարելուց հետո կստանաք հետևյալ հաղորդագրությունը:



- Էլ.ստորագրության ժամկետը տեսնելու համար, անհրաժեշտ է թարմացնել էջը՝ սեղմելով **F5** կամ կրկին մուտք գործել **ekeng.am**->**Անձնական էջ -> Ծառայություններ:**



- Ավարտելուց հետո՝ սեղմել **Դուրս գալ** կոճակը:



Անձնական էջ

- Մուտք գործելով Ձեր **Անձնական էջ** երևում են հետևյալ դաշտերը:



- **Անձնական տվյալներ** դաշտում նշված է անուն, ազգանուն, ՀԾՀ, էլ.հասցե, հեռախոսահամար:

Եթե ցանկանում եք փոխել նախկինում գրանցված հեռախոսահամարն անհրաժեշտ է **Անձնական տվյալներում** սեղմել **Edit** կոճակը և մուտքագրել բջջային հեռախոսահամարը առանց 0 գրանցելու:



- **Վճարումներ** դաշտում երևում է Ձեր հաշվեկշիռը և կատարված վճարումները:

Ինչպես նաև Վճարումներ դաշտում <<**Վճարել**>> կոճակը սեղմելով՝ կարող եք կատարել **online** վճարում:



- **Ծառայություններ** դաշտում մեկ անգամ սեղմելով **Ակտիվացնել** կոճակն երկարաձգում եք էլ.ստորագրության ժամկետը:

- Էլ.ստորագրության ժամկետը տեսնելու համար, անհրաժեշտ է թարմացնել էջը՝ սեղմելով **F5** և կրկին մուտք գործել **Անձնական էջ -> Ծառայություններ:**



Վճարման տարբերակներ՝

Բանկային վճարում

- Վճարումը կարող է իրականացվել ցանկացած բանկում (բանկային տվյալներ՝ էԿԵՆԳ ՓԲԸ, հվհհ՝ 02707093, Ամերիաբանկ ՓԲԸ, Հ/Հ՝ 15700–04596000500) : Անդորրագրի նպատակ դաշտը պարտադիր պետք է պարունակի ստորագրողի ՀԾ համարանիշը^անունը^ազգանունը (**օր.՝ 1234567895^Կարապետ^Կարապետյան):** Վճարումը հասանելի կլինի 1-2 աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարային տերմինալներ

- Վճարումը կարող է իրականացվել **TelCell, E-dram , EasyPay, Mobidram** վճարային տեմինալների միջոցով՝ պարզապես մուտքագրելով ստորագրողի ՀԾ համարանիշը: Վճարումը հասանելի կլինի սպասարկման համակարգում անմիջապես, իսկ էլեկտրոնային ստորագրությունը ավտոմատ կակտիվացվի:

Վճարային տերմինալներով կատարվող քայլերը հետևյալն են.

- **TelCell** – Էկրանի վրա ընտրում եք Պետ. Վճարում, այնուհետև EKENG, մուտքագրում եք Ձեր բջջայինը, հաջորդիվ հծի համարը և իրականացնում վճարումը:

- **EasyPay** – Ընտրելով ՝՝Այլ՝՝, սեղմում եք Էկենգ, ապա մուտքագրում բջջայինը, այնուհետև հծի-ն և հաջորդիվ իրականացնում վճարումը:



- **MobiDram** – Ընտրում եք ՝՝Բյուջետային վճարումներ՝՝, ապա Էկենգ և հաջորդիվ իրականացնում վճարումը, մինչ այդ ներմուծելով բջջային հեռախոսահամար և հծի:

- **E-Dram** – Ընտրելով ՝՝Այլ՝՝ տարբերակը, բացում եք Էկենգ բաժինը, մուտքագրում բջջային հեռախոսահամար, այնուհետև ներմուծում հծի համարանիշը և իրականացնում վճարումը:

Օնլայն վճարում

- Անձնական էջում **Օնլայն** վճարում կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել **ekeng. am -> Անձնական էջ -> Վճարումներ** դաշտում սեղմել **Վճարել** կոճակը:



- Բացված պատուհանում անհրաժեշտ է լրացնել դաշտերը և սեղմել **Վճարել**:



- Բարեհաջող առցանց վճարում կատարելուց հետո, ստանում եք հնարավորություն տպելու վճարման անդորրագիրը :

Խնդիրներ

Ինչու նույնականացման քարտով մուտք գործելիս Անձնական էջ ստանում ենք հետևյալ հաղորդագրությունը



- *Եթե նույնականացման քարտի PIN և PUK կոդերն ակտիվացված չեն:*
- *Եթե Ձեր համակարգչում տեղադրված է Avast antivirus կամ Kaspersky antivirus, ապա անհրաժեշտ է 10 րոպեով անջատել , տեղադրել նույնականացման քարտը և Google Chrome բրաուզերով մուտք գործել* ***ekeng-> Անձնական էջ:***
- *Եթե համակարգչի Օպերացիոն համակարգը 64 բիթ է, ապա անհրաժեշտ է* ***ekeng.am-> էլ.ստորագրություն*** *->* ***Կիրառվող ծրագրեր*** *բաժնից տեղադրել Cryptocard Suite Manage ծրագրի 32 բիթ տարբերակը, այնուհետև Cryptocard Suite Manage ծրագրի 64 բիթ տարբերակը:*
- ***Ekeng.am*** *կայքից տեղադրել Հանրային Հավաստագրերը՝ EKENG certificate installation:*

Ինչու էլ.ստորագրության ակտիվացումից հետո ժամկետը չեմ տեսնում

- *էլ.ստորագրության ժամկետը տեսնելու համար, անհրաժեշտ է թարմացնել էջը՝ սեղմելով **F5** կամ կրկին մուտք գործել **Անձնական էջ -> Ծառայություններ**:*